ՀԻՄՆԱԴԻՐ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՇԱՀՈՒՅԹ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿ ՉՀԵՏԱՊՆԴՈՂ ՍՊԸ/ՀՉ

ք. Երևան «17» հուլիսի 1997 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը՝ ի դեմս նախարար Արտաշես Պետրոսյանի, մի կողմից, և Հայաստանի ամերիկյան համալսարան կորպորացիան (ԱՄՆ, Կալիֆոռնիա նահանգ)՝ ի դեմս նախագահ Հարություն Արմենյանի, մյուս կողմից (հետագայում կողմերը կկոչվեն «Մասնակիցներ»), համաձայնություն կայացրեցին «Հայաստանի ամերիկյան համալսարան» համատեղ ձեռնարկություն հիմնադրելու մասին 1991թ. սեպտեմբերի 20-ին իրենց կողմից կնքված հիմնադիր պայմանագրում և համալսարանի կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

Սույն պայմանագրով և 1997 թ. հուլիսի 17-ին հաստատված կանոնադրությամբ Հայաստանի ամերիկյան համալսարան կորպորացիայի և ՀՀ բարձրագույն կրթության և գիտության նախարարության միջև 1991 թ. սեպտեմբերի 20-ին կնքված հիմնադիր պայմանագիրը և կանոնադրությունը չեղյալ են համարվում:

Սույնով մասնակիցները համաձայնություն կայացրեցին հետևյալի մասին՝

1. Հիմնադրել «Հայաստանի ամերիկյան համալսարան» շահույթ ստանալու նպատակ չհետապնդող ՍՊԸ/ՀՉ (հետագայում՝ «Ընկերություն»), որպես սահմանափակ պատասխանատվությամբ հայ-ամերիկյան ընկերություն:
2. «Հայաստանի ամերիկյան համալսարան» շահույթ ստանալու նպատակ չհետապնդող ՍՊԸ/ՀՉ -ն հանդիսանում է 1991 թ. սեպտեմբերի 20-ին կնքված վերոհիշյալ հիմնադիր պայմանագրին համապատասխան Մասնակիցների կողմից հիմնադրված «Հայաստանի ամերիկյան համալսարան» ոչ արտադրական, ոչ շահութաբեր համատեղ ձեռնարկության իրավահաջորդը:
3. Ընկերության գրանցման վայրն է (հասցեն)՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 9, Իսահակյան փող. 38, բն. 64:

   Ընկերության գործունեության վայրն է (հասցեն)՝ Հայաստանի Հանրապե-

տություն, Երևան 19, Մարշալ Բաղրամյան պող. 40:

4. Կազմակերպության լրիվ ֆիրմային անվանումն է.

հայերեն՝

«Հայաստանի ամերիկյան համալսարան» շահույթ ստանալու նպատակ չհետապնդող ՍՊԸ/ ՀՁ (Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 40).

անգլերեն՝

"American University of Armenia" Non-Profit Organization LTD/ JV (Marshal Baghramian 40, Yerevan):

5. Կազմակերպության կրճատ անվանումն է՝

հայերեն՝

Հայաստանի ամերիկյան համալսարան ՍՊԸ/ ՀՁ կամ ՀԱՀ ՍՊԸ/ ՀՁ

անգլերեն՝

American University of Armenia LTD/ JV կամ AUA LTD/ JV:

6. Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է իր կանոնադրությամբ սահմանված նպատակներին ու խնդիրներին համապատասխան:
7. Իր գործունեության ընթացքում Ընկերությունը ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ և հիմնադիր փաստաթղթերով:
8. Ընկերության կանոնադրական հիմնադրամը կազմում է 1220 դրամ, որը մասնակիցների միջև բաշխվում է հետևյալ համամասնությամբ.

   հայկական մասնակից՝ 220 դրամ կամ 18 %.

   ամերիկյան մասնակից՝ 1000 դրամ կամ 82 %:
9. Ընկերության մասնակիցը պարտավոր է իր բաժնեմասը ամբողջությամբ մուծել Ընկերության գրանցումից հետո (կանոնադրական հիմնադրամը մեծանալու դեպքում՝ համապատասխան փոփոխությունների գրանցումից հետո) մեկ տարվա ընթացքում:
10. Ընկերությունը կարող է ՀՀ օրենսդրությամբ և իր կանոնադրությամբ սահմանված կարգով փոփոխել կանոնադրական հիմնադրամի չափը:
11. Մասնակիցները պարտավորվում են չհրապարակել Ընկերության ֆինանսական գործունեությանը վերաբերող գաղտնի տեղեկությունները և ձեռնպահ մնալ առանց Ընկերության նախնական համաձայնության Ընկերությանը պատկանող տեխնոլոգիաները և նրա մտավոր սեփականությունը հանդիսացող մյուս օբյեկտները օգտագործելուց:
12. Մասնակիցների կողմից Ընկերության հիմնադիր փաստաթղթերով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով Ընկերությանը պատճառված վնասը ենթակա է հատուցման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Հատուցման ենթակա չեն անուղղակի վնասներն ու բաց թողնված օգուտները:
13. Իրենց պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար նախատեսված պատասխանատվությունից Մասնակիցներն ազատվում են, եթե այդ պարտավորությունների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը հետևանք են եղել պարտավորությունների սահմանումից հետո առաջացած հանգամանքների, որոնք չէին կարող Մասնակիցների կողմից կանխատեսվել կամ կանխվել: Նման հանգամանքների առաջանալու դեպքում (հավասարապես նաև դրանց վերացման դեպքում) Մասնակիցը պարտավոր է 5 օրվա ընթացքում գրավոր

տեղեկացնել դրա մասին ընկերության հոգաբարձուների խորհրդին, որը կկայացնի համապատասխան որոշում:

14. Ընկերության հիմնադրման և գործունեության կապակցությամբ Մասնակիցների միջև առաջացող և հիմնադիր փաստաթղթերով չկարգավորվող հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:
15. Մասնակիցների միջև առաջացող և փոխադարձ համաձայնությամբ չլուծվող վեճերը ենթակա են լուծման դատական կարգով:
16. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրելու պահից:
17. Սույն պայմանագիրը կարող է փոփոխվել և լրացվել միայն գրավոր ձևով կողմերի փոխադարձ համաձայնությամբ, Ընկերության կանոնադրությամբ նախատեսված կարգով:
18. Մասնակիցներից որևէ մեկի կողմից մյուսին հասցեագրված դիտողությունները պետք է լինեն գրավոր և հանձնվեն 30 (երեսուն) օր առաջ հետևյալ իրավաբանական հասցեներով՝

ՀՀ կրթության և գիտության նախարարություն՝

դոկտոր Արտաշես Պետրոսյանին, նախարար
ՀՀ կրթության և գիտության նախարարություն,
Մովսես Խորենացու փողոց, Երևան, Հայաստան

Հայաստանի ամերիկյան համալսարան կորպորացիա՝

դոկտոր Հարություն Արմենյանին, նախագահ
Հայաստանի ամերիկյան համալսարան կորպորացիա,
300 Լեյքսայդ դրայվ, 13-րդ հարկ,
Օքլանդ, Կալիֆոռնիա, 94612

ՀՀ կրթության և գիտության նախարարության անունից՝

Ա. Պետրոսյան

Հայաստանի ամերիկյան համալսարան կորպորացիայի անունից՝

Հ. Արմենյան